## Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ

Առանց զարդարելու նամակիս բնական բերկրապատար խնդութենով՝ շարժված աչս և այս օրը չեմ կարող լռութեան տալ. պատճառ, խղճահարվում: սիրտս այսպիսի մի յիշատակաց արժանի տօնը իւր փառաւոր հանդիսովը գրաւնի տակ թողնելու. և ինչու կ'թողնուի, երբ Ազգը շաբթէ շաբաթ՝ ամէն ամիս օրագրերի և լրագրերի միջոցաւ կ'ապաւէ իւր մասերում գոյացած Ազգային լուրերի և հանդէսների տեղեկանալու, որպէս զի, նրանցով խրախուսվի և քաջալերվի իւր արդէն սկսած կամ նոր սկսելի յառաջադիմութեան գործերի մէջ: Այս տօնը մեր Վարդանանց յաւերժացած սուրբ նահատակների տօնն է, որ կատարվեցաւ մի փառաշքեղ և գրաւող հանդիսով Շամախւոյ սուրբ Աստուածածնի նորակառոյց եկեղեցւոյ մէջ՝ մեր բարեջան Հոգևոր Տեսչի Սրբազան Անդրէաս Արքեպիսկոպոսի հանդիսադրութեամբը:

Չորս օր յառաջ Ս. Հայրը Պատարագի միջոցաւ իւր գեղեցիկ ատենաբանութեամբը Վարդանանց դարը իւր յիշատակներով ժողովրդեան բացատրելուց յետոյ՝ բարեմաղթեց և ցանկացաւ նոյն սէրն ու ոգին ունենալ Կրօնի և Ազգութեան մէջ. և անհրաժեշտ պարտականութիւն դրաւ ժողովրդեան վրայ, որ նոյն օրը ամսոյս 19—ին առանց զլանալու մի ինչպիսի և իցէ գործով, ներկայանան հանդիսին և յարգեն այն տօնը ուրախութեամբ: Այո, ճշտութեամբ կատարուեցաւ Ս. Հօր յորդորի պատուէրը: Այնքան ջերմեռանդութեամբ ժողովվեցան, մինչ հազիւ թէ հերիքանումէր այն մեծ և հոյակապ տաճարը պարունակելու իւր մէջ բազմութիւ ամբոխը: Երբ վերջացաւ պատարագը, հանդիսադիր Ս. Հայրը կատարեց Կայսեր գահակալութեան մաղթանքը (Մոլեբէն) իւր շրջապատած հոգևորական դասովը. և ապա հոգեհանգըստեան պաշտօն 'ի յիշատակ մեռելոց, որին հետեւեցաւ և Վարդանանց տօնի հանդէսը:

Սրբազան Հօր ծախսով եկեղեցւոյ ջահերը վառվեցան, նոյնպէս և բաժանվեցան սպիտակ մոմեր ամենեցուն խուռն բազմութեան: Օրիորդաց ուսումնարանի աշակերտուհիքը իրանց ուսուցչուհու հետ համեստութեամբ կանգնած էին: Նոյնպէս և դպրոցի աշակերտներն իւրեանց բոլոր ուսուցչներով կարգաւորապէս դասաւորված, ձեռներում բռնած ունելով կանաչ ոստեր և վառած մոմեր: Պաշտօնից յետոյ երգեցին դպրոցի աշակերտները իրանց երաժիշտ վարժապետ Բաղդասար Սարկաւագի վերակացութեամբ "Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց" շարականը: Կարդաց և այս տօնի վերաբերմամբ մի ճառ շնորհունակ Սարկաւագ Աւետիսն Փինաչեանց: Ազգային ախորժալուր երգերով թնդումէր օդը, որով և ոմանց աչքերում ծովանումէին ուրախութեան արտասուք: Վերջապէս Ս. Հայրը բարեմաղթելով կեանք և բարօրութիւն Ազգի, Կայսեր և Վեհափառ Հայրապետի համար՝ արձակեց ժողովրդեան: Սակայն, կամելով այդ օրը ուրախութեամբ պսակել, Ս. Հայրը պատրաստումէ ընթրիք դպրոցի ուսուցիչների և Կօնսիստորական ծառայողների համար: Երբ մօտեցաւ երեկոյն, Առաջնորդարանի գաւթումը դարձեալ Ս. Հօր ծախսով կատարվեցաւ ճրագահանդէս և հրախաղութիւն: Եկեղեցւոյ մէկ Կաթուղիկէի շուրջը փայլումէր գոյնզգոյն վառ լապտերներով, իսկ միւսը գեղեցիկ կանաչ և կարմիր գոյնով յօրինած վենզելով, որի ճակատին կ'շողար Արքայական Թագը, և այսպիսի վերտառութեամբ "Կեցցէ Կայսր Ալէքսանդր". և "Հայոց հաւատ Հայոց Տուն, Կեցցեն յաւէտ հաստատուն": Այստեղ Հայ մանկտւոյ բազմութեան նոյնպէս և հասակաւորների ուրախութեան աղաղակները և կեցցէները մինչև անդամ դրացի ազգերից շատերին գրաւած՝ կ'հրաւիրէին 'ի տես հանդիսին:

Յուսով եմ, որ . . . . Խմբագրութիւնը կընդունէ այս նամակը, և տեղի կ'տայ իւր պատուական Արարատ ամսագրի թերթերում 'ի վայելս ընթերցասիրաց:

**Յովհաննէս Միրզաբէկեանց:**

Ի 20 Փետրվարի 1870 ամ.
ի Շամախի:

---

Յունվ. 29 ամսաթուով և 117 Օրագրոյ մէջ կ'ընթեռնումք, թէ Կ. Պօլսոյ Նարլըգափուլի Ազգ. դպրոցին վերանորոգութեան համար պէտք եղած երկու հազար լիրայից՝ 100 ոսկին մեծ. Յակոբեան եղբարք, 50ը

ՄՆԾ. Կոստանդեա Քաղաքօղեան և 50ը մեծ. Խաչիկ Քարամանեան Պարոնայք նուիրած են։

---

## ՕՐԱԿԱՆ ԱՆՑԻՑ ՎՐԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Երբ ամէն 'ի վեր մեր խաղաղած ականջներն դարձեալ սկսաւ զօղանջել՝ անհամոյ անուամբ մի որ է Հասունեան. Նրագիր կառնուս ձեռքդ, փոխանակ սիրտդ զուարճացնելու և տեղեկութիւն մի ստանալու, զզուելի յօդուածներով թերթերը ներկած կը գտնես, ինչ է հարցնելու ըլլասնէ, գեր. Հասունեանի խրկած ինքնատուրծ և անձոռնի կոնդակի մը Պոլիս հասնիլը, և նոյնը ազգին ներկայացնող ինքնեկ և ոչ իրեն փափաքողներ ըլլալու եպիսկոպոսի մը՝ որուն համար ազգին անհատուած համբերութեանը սահմանը լեցուած ըլլալով, ալ կը թափէ դուրս քսան և հինգ և աւելի եւս տարուան քաշած դառն ծառայութեանցը կապանքները քակելով՝ թոյնն ու լեղութիւնն. Մենք ձանձրացած էինք լսելէն, գրելէն հասուկները կարդալէն, ընդարձակօրէնը զատ տեսութեամբ առանձին քննելէն, և ահա յանկարծ խաղաղած գտանք ինքզինքնիս այնիւ հօր մը խնամքը հովանւոյն ներքև պատսպարուելով՝ բայց աւա՜ղ որ շատ չտեւեց մեր խաղաղ վիճակը. վասն զի ահա այն վերջին մխիթարութենէն ալ կը զրկէ զմեզ գեր. Հասունեանը, և անոր տեղը յանակնկալս կընդունիմք փոխանակ զառին՝ դդումը, և փոխանակ սիրելւոյն զատելէն հասարակաց. "Զայն ժողովրդեան՝ ձայն Աստուծոյ" է կըսէ մեր Ս. գիրքը, (ոչ Հասունեանինը) որ ըսել է ընդունելին ժողովրդեան, ընդունելին բազմաց, ընդունելի է և Աստուծոյ. Ո՞վ կը մտածէ այս մեր ըսածները. տես ինչ կընէ գեր. Հասունեանը, արդէն հանդարտած ժողովուրդը և եւս խաղաղեցնելու միջոցներն ձեռք առնելու, կ'ընամ ըսել նորանոր հնարքներով ինքզինքը հանարակաց ատելութեանը ենթակայ կընէ. իսկ բուն վախճանն է որ՝ վերջին ծիգ մ'ալ թափէ որ կամ վատութեամբ կամ՝ քաջութեամբ, թերեւս ուրիշ անգամներուն օրինակները մտքին մէջ չխոթելով, յաղթանակ մ'ալ կանգնել 'ի փառս անձին, և 'ի նախատինս յաւերժական Հայ Հռովմէական հարազատ որդւոցը վրայ, բայց աւա՜ղ յաղթանակը յաղթուելու փոխուելով փորած փոսն ինքնին կ'իյնէ.

Զգիտեմ ինքը ինչ սրտի՝ և ինչ վիճակի մէջ գտնուիլը սա փայլկենիս, բայց սա յայտնի է ընականապէս որ այսպիսի բարեկարգող եւք ունեցող գործքի մը պատճառաւ սրտին դողէն ալեկոծեալ պիտի ըլլայ և տարտամ. վասն զի իրեն օգնական կարծած նեցուկն ու յեցուկներն ալ, ա՛լ այս անգամուն իրենք իրենցմէ ակն յայտնի տեսնելով, և յետ Աստուծոյ 'ի մարդկանէ ալ ամչնալով կը խոստովանին իրենց յետին անմտութիւնը, որ կուրութեամբ և անզգայ սրտիւ իրենց ժամանակը անցուցեր են մէկ յամառ անձի մը խոստացած սնոտի յոյսերէն, թէ զիրենք է ընտրած միայն յանհամար ժողովրդենէն Խորայէլի տանելու մնցնելու աւետեաց երկիրը, զոր խոստացաւ Աստուած Հասունեանի և իւր արբանեկացը.

Ասոնք ձգենք մէկդի, վասն զի խորհրդածութիւնները մէկզմէկ կը քաշեն, որչափ խորը մտնես, այնչափ կը խորասուզիս, որչափ քննես, այնչափ սրտնեղութիւնը կը կոխէ, որչափ պրպտես, այնչափ անբարած նիւթեր կան, որոնք այսօրուան օրս հրապարակ ելած երկքը մէկ թանկի ծախուելու վրայ են. Տեսնենք մեր ինքնեկ տեղապահին՝ ինչ ազդեցութիւն ըրաւ ժողովրդեան մէջ. Նախ ինչ կընէ. Ուղղափառ քահանաները և թերեւս չկարծած անձինքը յանկարծական կոչմամբ մը, անոնց կ'իմացնէ իր ոյժը, զի ժողովուրդը ականջ չը կախեր, ինչ հնարք կը բանեցնէ զասոնք որսալու, որչափ պարապ՝ ծոյլ բթամիտ մարդիկ կան, անոնց ըռեխայն տանձնակի աչուընին շլացնելով կ'արձակէ ժողովրդեան մէջ որ որչափ ուղիղ և արդարացի խօսքեր լսեն, (փառք Աստուծոյ տեղ մը չկայ որ չխօսուի այս հրէշնկրուն պղանդակ գործքը) արձակումը և աւուրչէքը իրմէն, անխիղճ վասն զի Հասունեանի համար եղած ամէն չարութիւնք օրինաւոր են, վազեն անդանդաղ զան վարագոյրը պերցնեն և ծանոյց տան իրեն.

Այս ըսածներուս օրինակները լսել ուզողը, այս վերջի չորս օրուան Մէճմուա լրագրոյն թերթերն առնուն, կը կարդան հոն Ճերմակեան Հ. Մեսրոպայ Վ. տին եղած նորօրինակ հարցաքննութիւնը, և անոր ինչ խաչեմ և կորուկ տուած պա-

տախաններն՝ թէ ալ քաշանայ.ք անգամ չեն կարող այդ իրենց առաջարկած անտանելի պատուհներ կրել, զի ալ տառապանքնին ուռաւ, պայթեցաւ, հասն ալ բուրեց մինչև 'ի Հռովմ հասաւ. Ասկէ զատ այլ և այլ յարգոյ անձինքներէ բուն առ ինքն Ռոսքելեան տեղապահը ուղղուած նամակներն ալ յայտի կընեցնեն, թէ ալ հասած է այս պաշտօնէից մէջ ըրած այսչափ տարուան չարի ծառայութեանց վերջը, չար գործերուն վախճանը, անիրաւ դատաստաններն, սերմանած խռովութիւններըն, և վերջապէս որը ձգեց, որը սկսեց, տեղեակ ըլլողը գիտէ, չգիտցողը և առնցմէ չհասկցողը յախուռն հասկնալիք չունի։ Վերջապէս ալ ծամենք զրուցելիքնիս, ըսենք բացարձակ, զի մեզ պահելով մեր ներսերնիս մաշեցնելուն, դուրս ձգենք քէ՞ մ'ալ ուրիշներն մեզ գթալով մեզ կարեկցին, այս մարդկանց մեզի բերելիք բարիքէն մենք շատոնց հրաժարականը տուեր ենք, ալ առնցմէ մեզի բարիք մը չգալէն զատ, օր աւուր չարութիւններով մեր տուններն ու ընտանիքներն կը փղովեն, առանց անձինքները մենք մեզի չենք ընդուներ ոչ հայր և ոչ անոր որդի կըլլանք մենք, որ պմեզ և մեր տունը կը մաշէ մեր յետ աշխատանաց անոյշ քնոյ ժամանակը, չենք ուզեր մենք այն ծառը, որ մեր ճտասան ամիս երկամի աշխատելէն վերջը՝ մեզ փուշ և տատասկ կը բուսցնէ։

Վերջապէս կարթննայ Հայ Հռովմէականը իւր թմրութենէն, և հաստատ կ'առաջադրէ որ չճանչնայ զինքը հպատակ և գերի գեր. Հասունեանի, որով իր որդիքն ալ կ'ազատէ ամօթապարտ ծառայութենէ մը այսօրուան օրս, գիտնալով որ եաքը իր որդիքը պիտի ըլլան իրենց հայրերուն գլխաւոր թշնամիքը, փոխանակ զի մենք հիմայ ըլլանք թշնամի և առող անվաւեր գրուածոց և յիմար բանադրանաց։

Հռովմէական պապական մը։

Բուդնամէի Մէճմուա թիւ 420

---

Ալ համոզուեցանք թէ՝ մեր Հռովմէական սիրելի ազգայինք այսուհետև պիտի կրնան թօթուել խորտակել բռնակալութեան անտանելի լուծ մը, որ տարիներէն 'ի վեր իրենց պարանոցներուն վրայ ծանրացած՝ դէպ 'ի չարաշուք գերութիւն մը կը տաներ զիրենք և մեր սիրտերը կը ճնշէր դառնութեամբ վշտաց։ Ուրախ ենք իմանալով որ, մեր Հռովմէական ազգայինք բաւական չհամարելով անցեալ կիւրակէի օրուան շարժումները՝ զոր ըրին Բերայի և Միջագիւղի եկեղեցեաց մէջ ընդդէմ Հասունեանի, իւր կոնդակին և միանգամայն Ռոսքելեանի տեղապահական պաշտօնակալութեան դէմ. — ուրիշ ցոյցերով ալ այս անգամ կ յայտնեն իրենց դժգոհութիւնը և իրենց ազատութեան կրաղձան. Բերայի ոստիկանութիւնը և հետևաբար կայսերական կառավարութիւնն ալ իմացաւ այս շարժու թէ Հռովմէական Հայք զրեթէ առ հասարակ ընդդէմ են Հասունեանի, և միաբանութեամբ ու հաստատամտութեամբ զինեալ են տապալել բռնակալութեան այս Հռովմէական պատուարը՝ որուն հիմունքը Վատիկանէն բերուած դրուած են Հայ-Լատինի մը ձեռօք . . . .

Բերայի ոստիկանութիւնը Հռովմէական ազգայիններէն քանի մը հոգի կանչելով՝ ուզեր է յորդորել որ եկեղեցեաց մէջ այսպիսի շարժումներ չընեն, և մինչև զանոնք երաշխաւորութեան տակ ձգելու վրայ է եղեր, ուրիշներն խմբովին և առանց կանչուելու ներկայացեր են ոստիկանութեան և իմացուցեր են թէ իրենք ալ Հասունեանը՝ իւր ղրկած տեղապահն ու անոր հաստատութեան կոնդակը չուզողներէն են. ասկէց զատ բազմատորագիր հանրագրեր ոստիկանութեան հասեր են որոնք միևնոյն յայտարարութիւնը կընեն կառավարութեան։ Ոստիկանութիւնը, այս յայտարարութեանց վրայ, արձակեր է իւր կանչածները առանց երաշխաւոր առնելու։

Ահա, այս վիճակին մէջ կգտնուին հիմա մեր հռովմէական ազգայինք։ Անշուշտ պիտի հասնին անոնք իրենց նպատակին, եթէ չլքանին։ Կայսերական կառավարութիւնը՝ որ անխտիր իւր բոլոր հպատակաց ազատ կենաց ու անդորրութեան կըփափաքի, — անտարակոյս պիտի կատարէ 'իրենց խնդիրը և թող չպիտի տայ որ իրենց կրօնական ու ազգային ազատութեան նուիրական իրաւունքները Վատիկանի խոնարհ խնկարկուի մը անձնահաճ բռնակալութեան ներքև տակաւին կոխկռտուին, և ամբողջ ժողովուրդ մը՝ ազնիւ ազգի մը մէկ մասը՝ իբրև գերի հեծէ տակաւին։

Վատիկան պիտի համոզուի թէ՝ Հայութեան արիւնէ սերեալ այս ազնիւ ժողովուրդը չլատինա-

նար, չէ թէ Հասուն մը, այլ եթէ ուրիշ քանի մը Հասուննե՛ր և քան զՀասո՛ւն՝ Հասուննե՛ր ջանահնար ըլլան լատինացունելու ։ — Այո՛, կարելի է պահ մը գիւթել ու անզգայեցնել Հայերը, բայց աչա՛ այսպէս՝ իբրև Փիւնիկ հաւ՝ կելնեն կվերակենդանանան՝ իրաւանց պաշտպանի դրօշակը իրենց առաջնորդ ունենալով, որուն առջև պատկառանօք ծունր կդնեն ամեն արդարասէր անձինք և ամեն արդարասէր կառավարութիւնք ։

Ա՛յն իշխանութիւնը, որուն հիմունքը բռնակալութեան վրայ դրուած են, ո՛ւշ կամ կանուխ պիտի կործանի ։ Իշխանութի՛ւն մը, մանաւանդ կրօնակա՛ն իշխանութի՛ւն մը, որ աստուածամարտ անսխալականութեան վարդապետութեան մը վրայ հիմնուած է, իբրև աւազի վրայ է այն, անշուշտ հիմն 'ի վեր պիտի ըլլայ և հետքն անգամ չպիտի մնայ ։ Այսպէս պիտի ըլլայ Վատիկան, եթէ 'ի հիմանց չնորոգուի ։ Ի զո՛ւր կաշխատի Հասուն. աչա՛ իւր բոլոր աշխատութիւնները և յոյսերը յօդս կցնդին ։ Հայկական արի՛նը լատինականին հետ խառնել անկարելի է ։

Փունջ Թիւ 495

---

## ԿԱԹՈԼԻԿ ԱԶԳԱՑՆՈՑ ՈՐՈՇԱԾ ԸՆԹԱՑՔԸ

Ինչպէս որ մեր ուրբաթ աւուր թուով ծանուցած էինք, կիրակի օրը Կաթոլիկ ազգայինք Բէրա Լալէ փողոցը Համազգեաց ընկերութեան ընթերցարանը գումարուեցան, 4–500ի չափ անձինք, որոնց մէջ էին նաև Վսեմ. Տիրան պէյ Ալեքսանեան, Վսեմ. Պօղոս էֆէնտի Կեօչեան, Վսեմ. Յօհաննէս էֆէնտի Սաքըզլեան և ուրիշ շատ երևելի անձինք ։

Ժողովին խնդրանօք Տիրան պէյ՝ նախագահ, Սերովբէ էֆէնտի Այնաւորեան՝ փոխ – նախագահ և Հէքիմեան Սրապիոն և Եսայեան Թովմաս էֆէնտիներն ալ՝ ատենադպիրը կարգուելով ատեան բացուեցաւ ։

Վսեմ. Տիրան պէյ խնդիրն իր ամեն պարագաներով բացատրեց. հասկցուց թէ Հայ Կաթոլիկութիւնը Արևելեան եկեղեցւոյ աւանդութեանց, ծիսից և արարողութեանց վրայ հաստատուած է ։ հետևաբար իրենք Արևելեան – Հայկական Կաթոլիկ եկեղեցի մը կամ հասարակութիւն մ'են, գլուխ ճանչելով իրենց Հռոմայ Պապը, և 150 տարիէ 'ի վեր Պապերն ալ զիրենք այսպէս ճանչած և ընդունած են ։ Բայց Գեր. Հասունեան, երսուն տարիէ 'ի վեր Արևելեան եկեղեցւոյ կարգերն ու կանոնները փոփոխելով, Կաթոլիկ Հայոց կրօնական և ազգային իրաւունքները ջնջելու կաշխատի Ասոր համար շատ անգամ Հռոմի բողոքած են, հանրագրութիւններ ղրկած են, բայց լսելի չեն եղած, Հիմա ալ Կաթոլիկ Հայոց բողոքող մասը Հռոմէն և իրենց կրօնքէն զատուածի տեղ դնելով, բանադրանաց ենթարկելու եղեր է, և կը պահանջէ որ ժողովուրդն իր բոլոր ազգային և կրօնական իրաւունքէն հրաժարի, և եղած բռնաբարութեանց դէմ լռէ ։ Բայց այս անհնար է, Հայ Կաթոլիկութիւնը 150 տարիէ 'ի վեր Հռոմի հետ ինչ պայմաններով որ կապուած է, այն պայմաններէն մազի չափ խոտորիլ յանձն չեն առնուր ։ Ու եթէ Հռոմ այս անգամ ալ իրենց բողոքն ու խնդիրը չըլսէ, և Գեր. Հասունեանի և անոր կողմնակիցներուն իրաւունք տայ, այն ժամանակ, որովհետև Գեր. Հասուն և իր կուսակիցներն իրենցմէ զատուած կըլլան, կը մնայ իրենց ալ զատ Արևելեան Կաթոլիկ եկեղեցի մը կազմել, նոյն հիմանց պայմանաց վրայ, որով վաղուց 'ի վեր ճանչցուած է Հռոմէն ։ Ասոր համար ալ երևելի անձ մը յատուկ տեղ մը պիտի շնորհէ եկեղեցի մը շինելու համար, որուն պէտք է ամեն մարդ ալ ըստ կարեաց նպաստէ ։

Ժողովուրդը միաձայն գոչեցին թէ Գեր. Հասունեանը ոչ աշխարհական և ոչ կրօնական պատրիարք կընդունին, և վերոյիշեալ հիմանց և պայմանաց վրայ զատ եկեղեցի մը կազմելու պատրաստեն ։

Այս որոշման համեմատ թէ Հռոմի և թէ Բ. Դրան հետ պէտք եղած բանակցութիւնը ազգին կողմէն կատարելու համար, գաղտնի քուէարկութեամբ 15 անձինք ընտրել առաջարկուելով, ներկայ գտնուողներն իրենց քուէները տուին, և բացակայից համար ալ որոշուեցաւ քուէտուփը ժողովարանին մէջ բաց պահել մինչև յառաջիկայ շաբաթ օրը հաւատարիմ անձանց հսկողութեան ներքև, որպէս զի ամեն մարդ առաւօտեան ժամ երկուքէն մինչև իրիկուն քուէնին տանին կամ ղրկեն ։

Այսպէս աչա մեր արգոյ կաթոլիկ ազգայինք՝ իրենց դատը չոր բողոքներու ապարդիւն շրջանէն հանելով գործնական ընթարքի մը մէջ կը դնեն ։ որով խնդիրն իր լուծմանը հանելու առաջին քայլն առած ըլլայ ։